ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. օգոստոսի 29 թիվ 79- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջներով մարզի հանրակրթական դպրոցներում 2013 թվականի սեպտեմբերի 2-ի միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու, ինչպես նաև արտակարգ դեպքերից խուսափելու և հասարակական կարգը պահպանելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետ **Գ.Գրիգորյանին**՝ 2013 թվականի սեպտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի դպրոցներում մարզի տարածքում ապահովել ուժեղացված հսկողություն՝ մասսայական միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պահպանման, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարներից խուսափելու նպատակով:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ **Պ. Համբարձումյանին**՝ հանրակրթական դպրոցներում տանել աշխատանքներ սեպտեմբերի 2-ի միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

3.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ **Ա.Բասենցյանին**՝ ապահովել մարզի բուժհիմնարկների պատրաստվածությունը սեպտեմբերի 2-ին անհրաժեշտության դեպքում շտապբուժօգնություն կազմակերպելու համար:

4.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով

վարչության պետ **Ս. Հովսեփյանին**՝ համայնքի ղեկավարների միջոցով ապահովել սեպտեմբերի 2-ին համայնքի տարածքում հասարակական կարգի պահպանությունը և օժանդակել միջոցառումների անցկացմանը:

5.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ գործնական աջակցություն ցուցաբերել մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչությանը՝ սեպտեմբերի 2-ի միջոցառումները կազմակերպելու գործում:

6.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ սեպտեմբերի 2-ի միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու և դրանցում հասարակական կարգը պահպանելու համար՝ համագործակցելով ոստիկանության, ծնողների և համայնքի ղեկավարի հետ:

7.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանից դպրոցներին ամրացված աշխատակիցների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ